



Քրեական Ընկերակցություն
20.02.2010
11010105

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1073 - Ն

18. 12 2009

ՄԻՋԻՆ ՍԱՆՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 1700 «ՎԱՐՍԱՉԱՐԺ-ՕՐԱՆՆՈՒՄՍԱԾԻՆ, ՕՐԱՆՆԱՐՈՒՄՍԱԾԻՆ, ՕՐԱՆՆԱՐՈՒՄՍԱԾԻՆ ԱԵՆՆԱՐՈՒՄՍԱԾԻՆ ԵՎ ՍԱՐՋԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՕՐԱՆՆԱՐՈՒՄՍԱԾԻՆ (ՇՍՏ 6877ԳԻՐ)» ԱՍՏԻՂԱԳՐԱԿՈՒՄՍԱԾԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԶԱԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԻՍՏԱՏՄԱՆԻ ԱՍՏԻՂ

Պեղակարգվելով «Լախնալյան մասնագիտական (սրբապատրաստական) և միջին մասնագիտական կրթության օտարերկրացի զինվորների 18-րդ եռօրյակի 2-րդ կետի ամենօրյակի հիմնը ցմբանցով 9-րդ կետի նախարարի 2008թ. մայիսի 12-ի «Լախնալյան և միջին մասնագիտական կրթության պետական կրթական ջանքերը շնչելու և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական ռզրակացություն մշակելու նպատակով ստեղծվող ղրկապահի հանձնաժողովների կազմը՝ ըստ մասնագիտական խմբերի հաստատելու մասին» N 445-ՆԱԿ հրամանով հաստատված ղրկապահի հանձնաժողովների փորձագիտական եզրակացությունը, ՁՊԱՍԵՆՈՒ ՄԻ

1. Դաստատել միջին մասնագիտական կրթության 1700 «ՎԱՐՍԱՉԱՐԺ-ՕՐԱՆՆԱՐՈՒՄՍԱԾԻՆ, ՕՐԱՆՆԱՐՈՒՄՍԱԾԻՆ, ՕՐԱՆՆԱՐՈՒՄՍԱԾԻՆ ԱԵՆՆԱՐՈՒՄՍԱԾԻՆ ԵՎ ՍԱՐՋԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՉԻՏԱԳՐՈՒՄ (ՉՍՏ 6877ԳԻՐ)» մասնագիտության պետական կրթական ջանքերը շնչելու համաձայն հավելվածի:

2. Լախնալյան մարման և զինվորական մասնագիտական կրթության վարչությանը (պետ՝ Վ. Արտուրյան) և օրենսդրության և իրավաբանական վարչությանը (պետ՝ Ս. Գրիգորյան) ստանալու կազմել հրամանը ներկայացնել 99 արդարադատության նախարարության պետական գրանցման:

3. Իրամանի կատարման հսկողությունը հանձնարելու նախարարի սեղակալ Ա. Ավետիսյանին:

ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՇԻՇԻՅԱՆ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 1706 «ՎԵՐԱՄՔԱՐԾ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ԾԱՆԱԴԱՐՎԱԿԱՆ ԴԱՆԱԴԱՐՅԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԳԼՈՒԽ 1.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 1706 «ՎԵՐԱՄՔԱՐԾ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ԾԱՆԱԴԱՐՎԱԿԱՆ ԴԱՆԱԴԱՐՅԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության «Մասնագետ» որակավորման աստիճանի 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության համար սահմանվել է հետևյալ մասնագիտացումները`
 - 1) 170601 «Վերամբարձ-տրանսպորտային մեքենաների շահագործում»,
 - 2) 170602 «ճանապարհային մեքենաների շահագործում»,
 - 3) 170603 «Շինարարական մեքենաների և սարքավորումների շահագործում»:
3. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտին շնորհվում է «Տեխնիկ» որակավորումը:
4. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևերով`
 - 1) առկա,
 - 2) հեռակա,
 - 3) դրսեկություն:
5. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական

(արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

- 1) կրթության առկա ձևով`
 - ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով` 3 տարի,
 - բ. հիմնական ընդհանուր կրթության հիմքով` 4 տարի.
 - 2) կրթության հեռակա ձևով`
 - ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով` 4 տարի
 - 3) դրսեկության (էքստենճատ) ձևով ուսուցման տևողությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի դրսեկությամբ (էքստենճատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ սահմանված կարգի որոշում է ուսումնական հաստատությունը:
6. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 3780 ժամ է, առավելագույն ծավալը` 6750 ժամ: Հիմնական ընդհանուր կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 1706 «ՎԵՐԱՄԲԱՐԶ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ԾԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ (ԸՍՏ ԾՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

7. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունք(ներ)ը`
 - 1) Տեխնիկ-մեքենագետ` շինարարական և ճանապարհային մեքենաշինության
 - 2) Տեխնիկ` վերամբարձ-տրանսպորտային մեքենաների և սարքավորումների շահագործման
 - 3) Տեխնիկ` շինարարական մեքենաների և սարքավորումների շահագործման,
 - 4) Տեխնիկ` ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման,
 - 5) Վարպետ` վերամբարձ-տրանսպորտային մեքենաների և սարքավորումների շահագործման
 - 6) Վարպետ` շինարարական մեքենաների և սարքավորումների շահագործման,
 - 7) Վարպետ` ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման,
8. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտությամբ մասնագետի` զբաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

- 1) Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների հետազոտությունների կատարմանը և կատարելագործմանը, ինչպես նաև փորձնական մոլուզների փորձարկմանն առնչվող տեխնիկական օգնություն ապահովելը,
- 2) Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների մանրօրինակներ (մակետներ) նախագծելը և ստեղծելը՝ բարձր որակավորման մասնագետի ղեկավարությամբ համաձայն մշակված մասնագրերի,
- 3) Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների պատրաստելու և տեղակայելու համար անհրաժեշտ աշխատանքային և նյութական ծախսերի քանակն ու արժեքը որոշելը՝ բարձր որակավորման մասնագետի ղեկավարությամբ համաձայն մշակված մասնագրերի,
- 4) Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաները և սարքավորումները աշխատանքի նախապատրաստելը, առանձին հանգույցներ և դետալներ կարգաբերելը,
- 5) Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների աշխատանքային պարապուրդների պատճառների և տևողության հաշվառում վարելը, նորոգման, տեխնիկական սպասարկման և շահագործման համար անհրաժեշտ նյութեր, պահեստամասեր, դետալներ և գործիքներ ստանալու հայտեր կազմելը,
- 6) Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների աշխատանքների որակն ապահովելու համար պատրաստման, տեղակայման, տեխնիկական սպասարկման, շահագործման և նորոգման տեխնիկական հսկողություն ապահովելը՝ գործող կանոններին և տեխնիկական փաստաթղթերին համապատասխան.
- 7) Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների բնագավառի տեխնիկական գիտելիքները, սկզբունքները և գործնական փորձը աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները լուծելու համար կիրառելը,
- 8) Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների միջոցով բեռնման-բեռնաթափման, բեռի ամրացման ժամանակ անվտանգության կանոնների և չափորոշիչների պահպանումը հսկելը,
- 9) Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաներ և սարքավորումներ նորոգող, ներկող, մաքրող, վարող բանվորների և օպերատորների աշխատանքը համակարգելը և հսկելը,
- 10) Արտադրության պլանավորման մեթոդներ մշակելիս, անձնակազմը, նյութերը, սարքավորումներն օգտագործելու արդյունավետությունը, անվտանգությունը և տնտեսական նպատակահարմարությունը որոշելիս, աշխատանքի մեթոդները և գործառնությունների հաջորդականությունն ուսումնասիրելիս, դրանց կիրառումը հսկելիս, կազմակերպության աշխատանքը տնտեսապես արդյունավետ կազմակերպելիս տվյալներ հավաքելը և տեխնիկական օգնություն ապահովելը.
- 11) Դժբախտ պատահարների սպառնալիքների հայտնաբերման և անվտանգության միջոցների ու կանոնների ներդրման աշխատանքին մասնակցելը,
- 12) Ջանազան լաբորատոր հետազոտություններ կատարելը, այդ հետազոտությունների և արտադրվող արտադրանքի որակը վերահսկելը:

ԳԼՈՒԽ 3.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅԱՆՁՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 1706 «ՎԵՐԱՄԲԱՐԾ-ՏՐԱՆՍԿՈՐՏԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՅԱԳՈՐԾՈՒՄ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

9. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի՝
- 1) մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններն ու հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների յուրացում,
 - 2) աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում աշխատանքային կոլեկտիվի անդամների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողության ձևավորում,
 - 3) ինչպես տիպական, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում մասնագիտական հարցերի լուծումների տարբերակներ առաջարկելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորում,
 - 4) մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը որոշակի սոցիալական և էթիկական հարցերի հետ որպես մեկ ամբողջություն դիտարկելու, ակտիվ քաղաքացիական գիտակցության դրսևորման կարողության ձևավորում,
 - 5) մասնագիտական գործունեության գործառնությունները կիրառվող նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,
 - 6) ինքնագարգացման և մասնագիտական կատարելագործման նպատակով իր և աշխատակիցների ուսումնառության կարիքները գնահատելու, դրանք իրագործելու ուղիներն առաջարկելու կարողության ձևավորում,
 - 7) մասնագիտական և ընդհանուր բնույթի տեղեկատվության գոյություն ունեցող աղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու կարողության ձևավորում,
 - 8) աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպելու, խմբի անդամներին ուղղորդելու, նրանց անհատական հնարավորությունները գնահատելու և արդյունավետ օգտագործելու հմտությունների զարգացում,
 - 9) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողությունների ձևավորում:

ԳԼՈՒԽ 4.

ՊԱՅԱՆՁՆԵՐ 1706 «ՎԵՐԱՄԲԱՐԾ-ՏՐԱՆՍԿՈՐՏԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՅԱԳՈՐԾՈՒՄ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

10. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝
- 1) իմանալ ՀՀ Սահմանադրության, տվյալ բնագավառի աշխատանքները, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,

- 2) տիրապետել հայոց լեզվին,
 - 3) հաղորդակցվել երկու օտար լեզուներով,
 - 4) պատկերացում ունենալ առողջ կենսակերպի մասին, տիրապետել ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
 - 5) դրսևորել ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,
 - 6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին,
 - 7) իմանալ հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների վարվելակերպի տարրերը,
 - 8) իմանալ տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:
11. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովվի`
- 1) ծանոթ լինել էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրներին,
 - 2) պատկերացում ունենալ արտակարգ իրավիճակների մասին, տիրապետել արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին, ծանոթ լինել փրկարարական աշխատանքների կազմակերպման կառույցներին և փրկարարական տեխնիկային, կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ:
12. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը պետք է ըստ աղյուսակ 1-ում բերված մոդուլների ապահովվի շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետում:
13. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ըստ աղյուսակ 2-ում բերված մոդուլների ապահովվի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերում:

ԳԼՈՒԽ 5.

ՊԱՅԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 1706 «ՎԵՐԱՄԲԱՐԶ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ (ԸՍՏ ԾՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԵՏԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ

14. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

- 1) միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնասօժանդակ անձնակազմի աշխատողները:
 - 2) հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ: Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն: Հատուկ մասնագիտական դասընթացները պարապող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:
 - 3) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը կարող է ունենալ ինչպես բարձրագույն մասնագիտական, այնպես էլ միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական աշխատանքի փորձ: Առանձին մասնագիտությունների գծով ուսումնական պրակտիկան կամ նրա որոշակի մասերը կարող է վարել նաև արհեստագործական կրթություն և բավարար մասնագիտական որակավորում ունեցող արհեստավորը:
 - 4) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:
15. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.
- 1) միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա), ինչն, ըստ բովանդակության պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների լրիվ ցանկին: Այդ առարկաների և մոդուլների, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքների) պետք է առկա լինեն դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, գործնական խաղերի սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:
16. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.
- 1) ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝
 - ա. աշխատանքի պաշտպանության և էկոլոգիայի,
 - բ. գծագրության,
 - գ. վերամբարձ-տրանսպորտային մեքենաների և սարքավորումների շահագործման,

- դ. շինարարական մեքենաների և սարքավորումների շահագործման,
- ե. ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման,
- զ. էկոնոմիկայի և կառավարման,
- է. ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական առարկաների՝ ըստ պետական ընդհանուր չափորոշչի պահանջների:

2) ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

- ա. վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների էլեկտրական սարքավորումների,
- բ. վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկման,
- գ. վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների և դրանց առանձին հանգույցների և ագրեգատների արատորոշման,
- դ. համակարգչային տեխնիկայի,
- ե. վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների հիդրոհաղորդակների,
- զ. նյութագիտության, վառելիքաքսանյութերի և գրունտների մեխանիկայի:

3) արհեստանոցների երաշխավորվող ցանկը.

- ա. վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների նորոգման, տեխնիկական սպասարկման և շահագործման,
- բ. մեխանիկական մշակման, եռակցման և զոդման:

4) մարզական համալիր՝

- ա. մարզադահլիճ,
- բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

- 1) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերազանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները.
- 2) ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր լսարանային պարապմունքներով չպետք է գերազանցի շաբաթական 36 ժամը, ինչը նաև ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալն է, ընդ որում՝ մշված ծավալը չի ներառում նախասիրական

առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պարապմունքները.

- 3) ուսումնական խմբի համար սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնական տարում մինչև 100 ժամ.
 - 4) ուսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է ուսումնական պլաններով.
 - 5) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը.
 - 6) հեռակա ձևով ուսուցման դեպքում ուսումնական տարվա ընթացքում դասախոսների հետ ուսանողների պարապմունքների ծավալը պետք է կազմի ոչ պակաս, քան 160 ժամ:
18. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.
- 1) միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները.
 - 2) պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով.
 - 3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները.
 - 4) պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները.
 - 5) ուսումնական պրակտիկաներն անցկացվում են ուսումնական հաստատության՝ պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական կաթինետներում, լաբորատորիաներում, արհեստանոցներում կամ համապատասխան կազմակերպություններում.
 - 6) արտադրական պրակտիկան անցկացվում է ճանապարհաշինարարական և շինարարական կազմակերպություններում, հանքավայրերում և նորոգման կազմակերպություններում: Ուսանողը պետք է անմիջական մասնակցություն ունենա իր գործունեության պարտականություններին վերաբերող աշխատանքների կատարմանը՝ համապատասխան կարողություններ ձեռք բերելու նպատակով:
19. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.
- 1) միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով անց է կացվում ուսանողների միջանկյալ

ատեստավորում, իսկ որակավորում շնորհելու համար՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորում.

- 2) միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել ինչպես ուսումնական կիսամյակի ընթացքում, այնպես էլ վերջում:
- 3) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին.
- 4) միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից.
- 5) շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով.
- 6) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա համոզվել սույն չափորոշչով 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտությամբ մասնագետի համար սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանության մեջ:

ԳԼՈՒԽ 6.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 1706 «ՎԵՐԱՄԲԱՐԶ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ԾԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ(ԸՍՏ ԵՅՈՒՂԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է համաձայն աղյուսակ 3-ում բերված օրինակելի ուսումնական պլանի:
21. Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս՝
 - 1) սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմում և հաստատում է աշխատանքային ուսումնական պլանը,
 - 2) աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս կարող է մինչև 5% չափով փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը,
 - 3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում՝ չփոփոխելով արդյունքները և կատարման չափանիշները,
 - 4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,
 - 5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,
 - 6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող

պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

- 7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:

Աղյուսակ 1

Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

Մոդուլի անվանումը «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՅԱԽ 4-09-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները. բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի ընդունվելու և դրանից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները. գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV). դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:
Ուսումնառության արդյունք 2	Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.

	<p>բ. ճիշտ է ներկայացնում գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.</p> <p>գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևորումներ.</p> <p>դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:</p>
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջամձնային հարաբերությունները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,</p> <p>դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրսևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:</p> <p>ե. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.</p> <p>զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:</p>
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:</p>
Ուսումնառության արդյունք 5	Դրսևորել քննադատական մտածողություն:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.</p>

	<p>բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.</p> <p>գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:</p>
Ուսումնառության արդյունք 6	Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.</p> <p>բ. ճիշտ է կազմում իր աշխատանքային պլանը (պայմանական աշխատանքային պլան).</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները:</p> <p>դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում,</p> <p>ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը.</p> <p>զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.</p> <p>է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, դրանց տալիս է արագ ու արդյունավետ լուծումներ:</p>
Մոդուլի անվանումը «ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀՀ 4-09-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:

Ուսումնառության արդյունք 1	Սահմանել ուսումնառության անձնական նպատակները:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,</p> <p>բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,</p> <p>գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին.
Կատարման չափանիշներ	<p>ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,</p> <p>բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,</p> <p>գ. տեղեկատվության առանձնացում/խմբավորումը կատարում է նպատակային,</p> <p>դ. հաղորդումը իրականացնում է հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:</p>
Ուսումնառության արդյունք 3	Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ.
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են՝</p> <ul style="list-style-type: none"> – պարզաբանումներ ստանալու ձգտումը, – գրառումներ կատարելը, – ամփոփելը, <p>բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,</p> <p>գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,</p> <p>դ. կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում:</p>
Ուսումնառության արդյունք 4	Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց</p>

	<p>միջև եղած տարբերությունները,</p> <p>բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները.</p> <p>գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:</p>
Ուսումնառության արդյունք 5	Կատարել փաստաթղթավորում:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության,</p> <p>բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը,</p> <p>գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:</p>
Մոդուլի անվանումը «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱԱՕ 4-09-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային անվտանգության պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՅԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները.
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը.</p>

	<p>գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը.</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները:</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը.</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում, հիմնարկներում:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է ներկայացնում սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները.</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները.</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները.</p> <p>գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները.</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:</p>

Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին բուժօգնություն:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը.</p> <p>բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը.</p> <p>գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ.</p> <p>դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները.</p> <p>ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը.</p> <p>զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:</p>

Աղյուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 1706 «Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

Մոդուլի անվանումը «ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՎՏՇՃՄ 04-09-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գծագրության և նախագծային առաջադրանքներ կատարելու՝ մասնագիտական մոդուլների ուսումնառության համար անհրաժեշտ կարողություններ
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Հանրահաշիվ», «Երկրաչափություն» առարկաները՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծրագրով նախատեսված ծավալով:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Կիրառել գծագրության հիմնական ստանդարտները
Կատարման չափանիշներ	ա. գծագրերը լրացնում է՝ կիրառելով գրատեսակների ստանդարտները, բ. գծագրերը կատարում է՝ կիրառելով գծերի տեսակների ստանդարտները, գ. գծագրերը կատարում է՝ կիրառելով ձևաչափերի ստանդարտները, դ. գծագրերը կատարում է՝ կիրառելով ստանդարտ մասշտաբներ, ե. գծագրերը չափադրում է՝ կիրառելով ստանդարտները:
Ուսումնառության արդյունք 2	Կառուցել պարզ երկրաչափական պատկերներ և մարմինների պրոյեկցիաներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում պարզ պատկերների պրոյեկցիաների կառուցման կանոնները. բ. տրված պրոյեկցիաներով ճիշտ է կառուցում բացակայող պրոյեկցիան և տարածական պատկերը. գ. ճիշտ է կառուցում մարմինների պարզ հատույթները և կտրվածքները:
Ուսումնառության արդյունք 3	Կատարել էքիզային և աշխատանքային գծագրեր՝ ըստ տրված առարկայի
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ընտրում չափող գործիքները և կատարում տրված առարկայի չափումները, բ. ճիշտ է կատարում պարզ դետալների էքիզներ, գ. ճիշտ է կատարում տրված դետալի աշխատանքային գծագիրը՝ տեխնիկական պահանջներին համապատասխան,

	դ. ճիշտ է կատարում պարզ հավաքական գծագրեր՝ տեխնիկական պահանջներին համապատասխան:
Ուսումնառության արդյունք 4	Կարողալ բանվորական գծագրերը և էքիզները.
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքային գծագրերի և էքիզների վրա պատկերված չափերի թույլտվածքները և մաքրության դասերի նշանակումները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքային գծագրերի և էքիզների վրա պատկերված մակերևույթների ձևի թույլատրելի շեղումները.</p> <p>գ. ճիշտ է մեկնաբանում աշխատանքային գծագրերի և էքիզի վրա ներկայացված տեխնիկական պայմանները.</p> <p>դ. ճիշտ է մեկնաբանում աշխատանքային գծագրերի կամ էքիզի վրա պատկերված երիթային ճեղքի, բազմաերիթի, ատամնանիվի, տարբեր նշանակության առվակների, երեսակների և նմանատիպ այլ տարրերի նշանակումները:</p>
Ուսումնառության արդյունք 5	Կարողալ հանգույցների ու մեքենամասերի հավաքական գծագրերը, դրանց պայմանական նշանակումները և մասնագրերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում հանգույցների և մեքենամասերի հավաքական գծագրերում առանձին դետալների դիրքավորման նշանակումները.</p> <p>բ. ճիշտ է բացատրում հավաքական գծագրում պայմանական նշանակումները՝ երիթային, բազմաերիթային միացություններ, ատամնանիվային կառչում, առանցքակալային նստեցվածք, եռակցման միացություն և նմանատիպ այլ նշանակումներ.</p> <p>գ. ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրերում պատկերված նստեցվածքների պայմանական նշանները.</p> <p>դ. ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրի և մասնագրի փոխադարձ կապը, և օգտվելով հավաքական գծագրից՝ գծագրերի փաթեթից ճիշտ է ընտրում համապատասխան դետալի բանվորական գծագիրը.</p> <p>ե. ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրի տեխնիկական պահանջները:</p>
Մոդուլի անվանումը «ՎԵՐԱՄԲԱՐՁ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՎՏՇՃՄ 04-09-002
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների (ՎՏՇՃՄ և Ս) էլեկտրական սարքավորումների նշանակության, ընդհանուր կառուցվածքի, աշխատանքի սկզբունքների և անվտանգ շահագործման վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաները միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծրագրով նախատեսված ծավալով և ԱՎՕ 4-09-001 «Անվտանգություն և առաջին

	օգնություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ էլեկտրական հոսանքի և էլեկտրական շարժաբերների աշխատանքի հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում էլեկտրական շղթան, հաջորդական և զուգահեռ միացումները, բ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս կիրառվող հաստատուն և փոփոխական հոսանքի համակցված էլեկտրաշարժաբերի տեսակները, գ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս էլեկտրական շարժիչների, կառավարման և պաշտպանիչ ապարատների տեսակները:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ ՎՏՇՃՄ և Ս էլեկտրական սարքավորումների նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս օգտագործվող էլեկտրական սարքավորումների հիմնական խմբերը, դրանց նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս էլեկտրական սարքավորումների աշխատանքի սկզբունքները:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ ՎՏՇՃՄ և Ս էլեկտրական սարքավորումների և կառավարման ավտոմատ համակարգերի անվտանգ շահագործման կանոնները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է շարադրում և մեկնաբանում էլեկտրաանվտանգության ընդհանուր կանոնները, բ. ճիշտ է շարադրում և մեկնաբանում ՎՏՇՃՄ և Ս էլեկտրական սարքավորումների անվտանգ շահագործման կանոնները, գ. ճիշտ է շարադրում և մեկնաբանում ՎՏՇՃՄ և Ս կառավարման ավտոմատ համակարգերի անվտանգ շահագործման կանոնները:
Մոդուլի անվանումը «ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ՎՏՇՃՄ 04-09-003
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ստատիկայի, կինեմատիկայի հիմունքների, նյութերի դիմադրության հաշվարկային մեթոդների և մեքենաների ու մեխանիզմների հիմնական տեսակների վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	90 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաները միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծրագրով նախատեսված ծավալով և ՎՏՇՃՄ 04-09-001 «Գծագրություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ ստատիկայի հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ստատիկայի աքսիոմները,

	բ. ճիշտ է ներկայացնում հարթ և տարածական ուժահամակարգերի հավասարակշռության պայմանները, գ. ճիշտ է ներկայացնում հենարանային ամրացումների տեսակները և որոշում հակազդումները հեծանի հարթ ծռման դեպքում, դ. ճիշտ է ներկայացնում ձողային համակարգերի (ֆերմաների) տեսակները և որոշում ձողերում լարումները և համակարգի հենարանային հակազդումները:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ կինեմատիկայի հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կինեմատիկայի հիմնական հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում կետի կինեմատիկայի հիմնական հավասարումները, գ. ճիշտ է ներկայացնում պինդ մարմնի կինեմատիկայի հիմնական հավասարումները:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ նյութերի դիմադրության հաշվարկային մեթոդները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում դեֆորմացիայի տեսակները և հեծանի կտրվածքի երկրաչափական պարամետրերը, բ. ճիշտ է ներկայացնում հեծանի կտրվածքի չափերի որոշման եղանակները ձգման-սեղմման, ծռման և ոլորման ժամանակ:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ մեքենաների և մեխանիզմների հիմնական տեսակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում մեխանիկական փոխանցումների հիմնական տեսակները և դասակարգումը, բ. ճիշտ է ներկայացնում ատամնանիվային փոխանցումների տեսակները, հիմնական տարրերը և երկրաչափական պարամետրերը, գ. ճիշտ է ներկայացնում փոկային և շրթայական փոխանցումների տեսակները, հիմնական տարրերը և երկրաչափական պարամետրերը:
Մոդուլի անվանումը «ԿԵՆՍԱՆԿՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ, ԲՆԱՊԱՅՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՎՏՇԵՍ 04-09-004
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման ընթացքում կենսագործունեության անվտանգության, արտակարգ իրավիճակների և բնապահպանական միջոցառումների վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:

Ուսումնառության արդյունք 1	Իմանալ կենսագործունեության անվտանգության կանոնները ՎՏՇՄ և Ս շահագործման ժամանակ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս այն անսարքությունները, որոնց դեպքում արգելվում է դրանց շահագործումը,</p> <p>բ. ճիշտ է բացատրում ՎՏՇՄ մեքենաների թողարկումից, կանգառից և արագության փոփոխումից առաջ, ինչպես նաև տեղափոխման ժամանակ շահագործող անձնակազմի գործողությունները՝ կապված լուսային և ձայնային ազդանշանների կիրառման հետ,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս շահագործման կարգը օրվա մութ ժամերին,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում արհեստական կառույցներով ՎՏՇՄ և Ս տեղափոխման անվտանգության կանոնները և պահանջները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում մեքենավարների աշխատատեղին ներկայացվող պահանջները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում իր գործողությունները՝ կապված ՎՏՇՄ և Ս շահագործման ընթացքում կենսագործունեության անվտանգության կանոնների հետ:</p>
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ կենսագործունեության անվտանգության կանոնները ՎՏՇՄ և Ս տեխնիկական սպասարկումների և ընթացիկ նորոգումների ժամանակ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս տեխնիկական սպասարկումների (SU) և ընթացիկ նորոգումների կատարման տեղերին ներկայացվող պահանջները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս SU և նորոգումների ժամանակ օգտագործվող գործիքներին և սարքերին ներկայացվող պահանջները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս SU և ընթացիկ նորոգումների ժամանակ ագրեգատներին և հանգույցներին ներկայացվող անվտանգության պահանջները:</p>
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ ՎՏՇՄ և Ս շահագործման ընթացքում հակահրդեհային անվտանգության և էլեկտրաանվտանգության կանոնները, կատարել պատահարների գրանցում
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս շահագործման ժամանակ հակահրդեհային գույքի լրակազմությունը, նշանակությունը և կիրառումը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս կայանատեղերին ներկայացվող հակահրդեհային անվտանգության պահանջները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների պահպանման և օգտագործման հակահրդեհային անվտանգության կանոնները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս շահագործման էլեկտրաանվտանգության կանոնները,</p> <p>ե. ճիշտ է կատարում պատահարների գրանցում:</p>

Ուսումնառության արդյունք 4	Իմանալ ՎՏՇՄ և Ս շահագործման ընթացքում բնապահպանական միջոցառումները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս շահագործման ժամանակ շրջակա միջավայրի հնարավոր աղտոտում առաջացնող պատճառները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս լվացման, ՏՍ և ընթացիկ նորոգման ժամանակ օգտագործվող քիմիական նյութերի՝ շրջակա միջավայրի վրա վտանգավոր ազդեցության կանխարգելման միջոցառումները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ներքին այրման շարժիչների նորմալ շահագործմանը ներկայացվող պահանջները՝ կապված շրջակա միջավայրի անվտանգության պահպանման հետ,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների պահպանման, լցարկման և տեղափոխման ժամանակ ներկայացվող բնապահպանական պահանջները:</p>
Մոդուլի անվանումը «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՌԵԼԻՔԱՔՍԱՆՅՈՒԹԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՎՏՇՄ 04-09-005
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ ՎՏՇՆ մեքենաներում և սարքավորումներում օգտագործվող նյութերի և վառելիքաքսանյութերի նշանակության, տեսակների ու հատկությունների վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	90 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Քիմիա» և «Ֆիզիկա» առարկաները միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծրագրով նախատեսված ծավալով:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ ՎՏՇՆ մեքենաներում և սարքավորումներում օգտագործվող սև և գունավոր մետաղների, դրանց համաձուլվածքների, ռետինատեխնիկական և օրգանական նյութերի դասակարգումը, մակնիշավորումը, կիրառման բնագավառները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում սև և գունավոր մետաղների դասակարգման հատկանիշները, ճիշտ է բացատրում դրանց կառուցվածքային առանձնահատկությունները,</p> <p>բ. ճիշտ է բացատրում մետաղների և դրանց համաձուլվածքների մակնիշավորման նշանակությունը և ներկայացնում է այդ նյութերի ֆիզիկամեխանիկական հատկությունները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում մետաղների և դրանց համաձուլվածքների նպատակային օգտագործման բնագավառները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ռետինատեխնիկական և օրգանական նյութերի դասակարգման ցուցանիշները և դրանց կառուցվածքը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում ռետինատեխնիկական և օրգանական նյութերի մակնիշավորումը և դրանց դերը,</p>

	գ. ճիշտ է ներկայացնում ռետինատեխնիկական և օրգանական նյութերի կիրառման բնագավառները:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ ՎՏՇՆ մեքենաների շարժիչներում օգտագործվող վառելանյութերի դասակարգումը, մակնիշավորումը և օգտագործման բնագավառները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՆ մեքենաներում օգտագործվող վառելանյութերի տեսակները և դրանց դասակարգումը, բ. ճիշտ է ներկայացնում շարժիչներում օգտագործվող վառելանյութերի մակնիշավորումը, գ. ճիշտ է ներկայացնում վառելանյութերի օգտագործման ոլորտները և պայմանները, դ. ճիշտ է ներկայացնում վառելանյութերի հիմնական ֆիզիկական հատկությունները:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ ՎՏՇՆ մեքենաներում և սարքավորումներում օգտագործվող քսանյութերի դասակարգումը, մակնիշավորումը և կիրառման ոլորտներն ու պայմանները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում քսանյութերի և յուղերի դասակարգման ցուցանիշները, բ. ճիշտ է ներկայացնում քսանյութերի և յուղերի մակնիշավորման սկզբունքը, գ. ճիշտ է ներկայացնում քսանյութերի և յուղերի կիրառման ոլորտները՝ ըստ կլիմայական և շահագործական պայմանների:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ մետաղական, ռետինե նյութերի, վառելիքաքսանյութերի և օրգանական նյութերի դերը ՎՏՇՆ մեքենաների հուսալիության և արդյունավետ շահագործման գործընթացում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում մետաղական նյութերի դերը ՎՏՇՆ մեքենաների և սարքավորումների հուսալիության և երկարակեցության ապահովման տեսանկյունից, բ. ճիշտ է բացատրում ռետինատեխնիկական և օրգանական նյութերի նշանակությունը ՎՏՇՆ մեքենաների և սարքավորումների շահագործման արդյունավետության և անխափան աշխատանքի տեսանկյունից, գ. ճիշտ է ներկայացնում վառելիքաքսանյութերի դերը ՎՏՇՆ մեքենաների հուսալի և արդյունավետ աշխատանքի ապահովման գործում, դ. ճիշտ է ներկայացնում վառելիքաքսանյութերի դերը ՎՏՇՆ մեքենաների և սարքավորումների անվտանգ և անխափան շահագործման գործում:
Մոդուլի անվանումը «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐ ԵՎ ՀԻՊՈՊՆԵՎՄԱՅԱՍԱԿԱՐԳԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՎՏՇՆՄ 04-09-006
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ ՎՏՇՆՄ և Ս հիդրավլիկական և պնևմատիկական համակարգերի դերի, կառուցվածքի, աշխատանքի սկզբունքների, ինչպես նաև այդ համակարգերում օգտագործվող տեխնիկական հեղուկների հատկությունների և հեղուկի մեխանիկայի օրենքների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել ՎՏՇՆՄ և Ս հիդրոպնևմատիկական համակարգերի շահագործման, արատորոշման, նորոգման և տեխնիկական սպասարկման կարողություններ:

Մոդուլի տևողությունը	126 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաները միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծրագրով նախատեսված ծավալով և ՎՏՇՄ 04-09-003 «Կիրառական մեխանիկա» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ հիդրոպնևմահամակարգերում կիրառվող հեղուկների հիմնական հատկությունները, դրանց ներկայացվող պահանջները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հիդրոհամակարգերում օգտագործվող տեխնիկական հեղուկների հիմնական հատկությունները և բնութագրերը, բ. ճիշտ է ներկայացնում տեխնիկական հեղուկներին ներկայացվող պահանջները՝ կախված համակարգի աշխատանքային պարամետրերից, գ. ճիշտ է ներկայացնում տեխնիկական հեղուկների մակնիշավորման և արատորոշման սկզբունքներին:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ և կիրառել հեղուկների մեխանիկայի հիմնական օրենքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հեղուկների հավասարակշռության հիմնական օրենքները, բ. ճիշտ է ներկայացնում հեղուկների շարժման հիմնական օրենքները, գ. ճիշտ է լուծում հեղուկների հավասարակշռության և շարժման վերաբերյալ առաջադրված գործնական պարզ խնդիրները, դ. ճիշտ է օգտվում տեղեկատու գրականությունից և գործող նորմատիվային փաստաթղթերից:
Ուսումնառության արդյունք 3	Բացատրել հիդրոպնևմահամակարգերի դերը, տեսակները, սխեմաները և աշխատանքի սկզբունքը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս կիրառվող հիդրոպնևմահամակարգերի դերը և տեսակները, բ. ճիշտ է բացատրում հիդրոպնևմահամակարգերի սխեմաները և ճիշտ է մեկնաբանում դրանցում օգտագործվող պայմանական նշանները, գ. ճիշտ է բացատրում հիդրավլիկական և պնևմատիկական համակարգերի աշխատանքի սկզբունքը:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ հիդրոպնևմահամակարգերի առանձին հանգույցների և տարրերի դերին, կառուցվածքին և աշխատանքի սկզբունքին
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ուժային հանգույցի տարրեր հանդիսացող պոմպերի և հիդրոշարժիչների տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, բ. ճիշտ է ներկայացնում հիդրոպնևմահամակարգերի կառավարման սարքերի՝ արագության և ուղղության կարգավորիչների դերը, տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները,

	<p>գ. ճիշտ է ներկայացնում հիդրոպնևմահամակարգերի օժանդակ սարքերի (զտիչներ, հիդրոակունուլյատորներ, ապահովիչ և հակադարձ փականներ, յուղի ավազաններ, մանոմետրեր) նշանակությունը, տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</p> <p>դ. ճիշտ է բացատրում հիդրոպնևմահամակարգերում օգտագործվող խողովակային միացումների և խտացումների տեսակները ու դրանց ընտրման սկզբունքները:</p>
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ հիդրոպնևմահամակարգերի հիմնական տեխնիկական բնութագրերը, դրանց կառավարման եղանակները
Կատարման չափանիշներ	<p>ա. մեքենաների տեխնիկական փաստաթղթերի և տեղեկատուների հիման վրա ճիշտ է բացատրում հիդրոպնևմահամակարգերի աշխատանքային բնութագրերը ու դրանց փոփոխման թույլատրելի սահմանները,</p> <p>բ. ճիշտ է բացատրում հիդրոպնևմահամակարգերի ուժային հանգույցի կառավարման եղանակները և ելքային պարամետրերի փոփոխման սկզբունքները,</p>
Ուսումնառության արդյունք 6	Իմանալ հիդրոպնևմահամակարգերում առաջացող հիմնական անսարքությունները, դրանց առաջացման պատճառները և վերացման եղանակները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում պոմպերում և հիդրոշարժիչներում առաջացող հիմնական անսարքությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում պոմպերում և հիդրոշարժիչներում անսարքությունների առաջացման պատճառները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում պոմպերում և հիդրոշարժիչներում առաջացած անսարքությունների վերացման եղանակները,</p> <p>դ. ճիշտ է բացատրում հիդրոշարժիչների շարժման արագության և ուղղության կարգավորիչներում առաջացող հիմնական անսարքությունները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում հիդրոշարժիչների շարժման արագության և ուղղության կարգավորիչներում անսարքությունների առաջացման պատճառները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում հիդրոշարժիչների շարժման արագության և ուղղության կարգավորիչների հիմնական անսարքությունների վերացման եղանակները,</p> <p>է. ճիշտ է բացատրում հիդրոպնևմահամակարգերի զտիչներում, փականներում և այլ օժանդակ սարքերում առաջացող հիմնական անսարքությունները,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում օժանդակ սարքերում անսարքությունների առաջացման պատճառները,</p> <p>թ. ճիշտ է ներկայացնում օժանդակ սարքերում առաջացած հիմնական անսարքությունների վերացման եղանակները:</p>

Մոդուլի անվանումը «ՎԵՐԱՄԲԱՐՁ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ, ՁԵԼՈՒՄ ԵՎ ՇԱՅԱԳՈՐԾԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՎՏՇՃՄ 04-09-007
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ըստ ընդունված նորմերի և պահանջների՝ ՎՏՇՃՄ և Ս ընդունում, գելում և շահագործական փորձարկում կազմակերպելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	126 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՎՏՇՃՄ 04-09-003 «Կիրառական մեխանիկա» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ նոր կամ կապիտալ նորոգումից հետո ստացվող ՎՏՇՃՄ և Ս շահագործական փաստաթղթերի անվանացանկը, մեքենաների և դրանց հավաքական միավորների լրակազմությունը ու տեխնիկական վիճակը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է թվարկում գործարանից կամ կապիտալ նորոգումից ստացված ՎՏՇՃՄ և Ս շահագործական փաստաթղթերը, բ. ճիշտ (ըստ կատալոգի) է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս և դրանց հավաքական միավորների լրակազմությունը, գ. ճիշտ է ներկայացնում բազային մեքենաների բոլոր հիմնական ագրեգատների և հանգույցների տեխնիկական վիճակը բնութագրող պարամետրերը, դ. ճիշտ է ներկայացնում մեքենաների աշխատանքային սարքավորումների տեխնիկական վիճակը բնութագրող պարամետրերը, ե. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս ոչ լրակազմության և վնասումների առկայության մասին արձանագրությունների ձևերը:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ նոր կամ կապիտալ նորոգումից ստացված ՎՏՇՃՄ և Ս զելման կարգը, փուլերը և ռեժիմները, գնահատել զելման ցուցանիշները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս յուրաքանչյուր տեսակի զելման տևողությունը, բ. ճիշտ է ներկայացնում զելման հաջորդական փուլերը (պարապ և բեռնվածքային) և դրանց իրականացման ռեժիմները, գ. ճիշտ է գնահատում ՎՏՇՃՄ և Ս բավարար զելման ցուցանիշները:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ ՎՏՇՃՄ և Ս շահագործական արտադրողականության վրա ազդող հիմնական գործոնները, որոշել արտադրողականությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս շահագործական արտադրողականության վրա ազդող հիմնական գործոնները, բ. ճիշտ է ընտրում առավելագույն արտադրողականությանը համապատասխանող աշխատանքային սխեման,

	<p>գ. ճիշտ է ներկայացնում խրոնոմետրաժի անցկացման ձևերը,</p> <p>դ. ճիշտ է գնահատում ՎՏՇՃՄ և Ս արտադրողականության վրա ազդող տեխնիկական պայմանները և կատարված աշխատանքի որակը,</p> <p>ե. ճիշտ է որոշում ՎՏՇՃՄ և Ս շահագործական արտադրողականությունը:</p>
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ ճանապարհաշինական մեքենաների շահագործական փորձարկման ընթացքում քարշի ուժի որոշման եղանակները: Տարբեր մեթոդներով որոշել ՎՏՇՃՄ վառելիքի տեսակարար ծախսը շահագործական պայմաններում
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում քարշակների քարշի ուժի որոշման եղանակները (դինամոմետրական և դինամոգրաֆի),</p> <p>բ. ճիշտ է ընտրում կցորդային աշխատանքային սարքավորումները և ՎՏՇՃՄ փոխադրման քարշակները՝ ըստ քարշային ճիգի,</p> <p>գ. ճիշտ է որոշում ՎՏՇՃՄ վառելիքի տեսակարար ծախսը շահագործման առաջադրված պայմաններում:</p>
Մոդուլի անվանումը «ՎԵՐԱՄԲԱՐՁ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՎՏՇՃՄ 04-09-008
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ ՎՏՇՃՄ և Ս տեխնիկական սպասարկումների(SU) , դրանցում իրականացվող գործընթացների և տեխնիկական զննման վերաբերյալ և ձևավորել SU կազմակերպելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	126 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՎՏՇՃՄ 04-09-003 «Կիրառական մեխանիկա» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ ՎՏՇՃՄ և Ս տեխնիկական սպասարկումների (SU) տեսակները և դրանց իրականացման ժամանակացույցը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս SU տեսակները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս SU իրականացման մեթոդները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս SU իրականացման ժամանակացույցը:</p>
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ ՎՏՇՃՄ և Ս հերթափոխային սպասարկման (ՋՍ) նպատակը, նախատեսված աշխատանքների անվանացանկը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս ՋՍ նպատակը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս ՋՍ ներառված օպերացիաների անվանացանկը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս ՋՍ անցկացման ժամկետները,</p>

	դ. պարտականությունների թերթիկները ճիշտ է բաշխում ՀՍ իրականացնող անձնակազմի անդամների միջև:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ ՎՏՇՏՄ և Ս պարբերական SU նպատակները, նախատեսված գործընթացների անվանացանկը և ժամկետները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՏՄ և Ս պարբերական SU տեսակներն ու նպատակները, բ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՏՄ և Ս SU-1 անցկացման ժամկետները և նախատեսված աշխատանքների անվանացանկը, գ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՏՄ և Ս SU-2 անցկացման ժամկետները և նախատեսված աշխատանքների անվանացանկը, դ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՏՄ և Ս SU-3 անցկացման ժամկետները և նախատեսված աշխատանքների անվանացանկը, ե. պարտականությունների թերթիկները ճիշտ է բաշխում SU իրականացնող անձնակազմի անդամների միջև:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ ՎՏՇՏՄ և Ս սեզոնային SU նպատակը և կատարվող աշխատանքների անվանացանկը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՏՄ և Ս սեզոնային SU իրականացման նպատակը և անհրաժեշտությունը, բ. ճիշտ է ներկայացնում սեզոնային SU աշխատանքների անվանացանկը՝ կախված ՎՏՇՏՄ և Ս կառուցվածքային առանձնահատկություններից և կլիմայական պայմաններից, գ. պարտականությունների թերթիկները ճիշտ է բաշխում ՎՏՇՏՄ և Ս սեզոնային SU իրականացնող անձնակազմի անդամների միջև:
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ ՎՏՇՏՄ և Ս հատուկ SU նպատակը, կատարվող աշխատանքների անվանացանկը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՏՄ և Ս հատուկ SU իրականացման նպատակը և անհրաժեշտությունը, բ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՏՄ և Ս հատուկ SU աշխատանքների անվանացանկը, գ. պարտականությունների թերթիկները ճիշտ է բաշխում ՎՏՇՏՄ և Ս հատուկ SU իրականացնող անձնակազմի անդամների միջև:
Ուսումնառության արդյունք 6	Իմանալ ՎՏՇՏՄ և Ս տեխնիկական զննման աշխատանքների անվանացանկը և իրականացման ժամկետները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՏՄ և Ս տեխնիկական զննման նպատակը և նախատեսված աշխատանքների անվանացանկը, բ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՏՄ և Ս տեխնիկական զննման անցկացման ժամկետները, գ. պարտականությունների թերթիկները ճիշտ է բաշխում ՎՏՇՏՄ և Ս տեխնիկական զննում իրականացնող անձնակազմի անդամների միջև:
Մոդուլի անվանումը «ՎԵՐԱՄԲԱՐՁ-ՏՐԱՆՄՊՈՐՏԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՃԱՆԱՊԱՐՉԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՇԱՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՊԱՆՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՎՏՇՏՄ 04-09-009
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ՎՏՇՏՄ և Ս ու շահագործական նյութերի փոխադրման և պահպանման կազմակերպման կարողություններ:

Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՎՏՇՄ 04-09-005 «Նյութագիտություն և վառելիքաքսանյութեր» և ՎՏՇՄ 04-09-006 «Տեխնիկական հեղուկներ և հիդրոպնևմատիկական կարգեր» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ ՎՏՇՄ և Ս փոխադրման եղանակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս փոխադրման եղանակները, բ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս փոխադրման եղանակը պայմանավորող գործոնները, գ. ճիշտ է ներկայացնում վերամբարձ-տրանսպորտային մեքենաների, ճանապարհային մեքենաների, շինարարական մեքենաների և սարքավորումների փոխադրման առանձնահատկությունները, դ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս փոխադրող անձնակազմի պարտականությունները:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ ՎՏՇՄ և Ս փոխադրման կարգը և ընտրել փոխադրամիջոցն ու երթուղին
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ընտրում ՎՏՇՄ և Ս փոխադրման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցները, բ. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլային տրանսպորտով ՎՏՇՄ և Ս փոխադրման կարգը, գ. ճիշտ է ներկայացնում երկաթուղային տրանսպորտով ՎՏՇՄ և Ս փոխադրման կարգը, դ. ճիշտ է ընտրում ՎՏՇՄ և Ս փոխադրման երթուղին՝ կախված ՎՏՇՄ և Ս զանգվածից, եզրաչափերից, կառուցվածքից, փոխադրման հեռավորությունից, փոխադրման տեսակի առանձնահատկություններից և կլիմայական պայմաններից:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ ՎՏՇՄ և Ս փոխադրման անվտանգության կանոնները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տեղափոխվող ՎՏՇՄ և Ս բեռնման անվտանգության կանոնները, բ. ճիշտ է ներկայացնում փոխադրող կցորդիչի կամ երկաթուղային վագոնի հարթակի վրա ՎՏՇՄ և Ս ամրացման կարգը, գ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս փոխադրման ժամանակ ձայնային, լուսային և տեսողական միջոցների կիրառման կարգը, դ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՄ և Ս փոխադրումից հետո բեռնաթափման անվտանգության կանոնները:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների փոխադրման և պահպանման անվտանգության կանոնները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում վառելիքաքսանյութերի փոխադրման անվտանգության կանոնները, բ. ճիշտ է ներկայացնում տեխնիկական հեղուկների փոխադրման անվտանգության կանոնները, գ. ճիշտ է ներկայացնում վառելիքաքսանյութերի պահպանման անվտանգության կանոնները, դ. ճիշտ է ներկայացնում տեխնիկական հեղուկների պահպանման անվտանգության կանոնները:

Ուսումնառության արդյունք 5	Իմանալ ՎՏՇՃՄ և Ս պահպանման եղանակները և կանոնները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս պահպանման ձևերը, բ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս պահպանման եղանակները և դրանց նկատմամբ ներկայացվող կանոնները, գ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս պահպանման տեղին ներկայացվող կլիմայական և հակահրդեհային անվտանգության կանոնները:
Ուսումնառության արդյունք 6	Իմանալ ՎՏՇՃՄ և Ս ագրեզատների, էլեկտրական սարքավորումների, դետալների և շահագործական նյութերի պահպանման առանձնահատկություններն ու կարգը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս ագրեզատների պահպանման կարգն ու առանձնահատկությունները, բ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս էլեկտրական սարքավորումների կարգն ու առանձնահատկությունները, գ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս շահագործական նյութերի կարգն ու առանձնահատկությունները, դ. ճիշտ է ներկայացնում ՎՏՇՃՄ և Ս դետալների կարգն ու առանձնահատկությունները:
Մոդուլի անվանումը «ԿԵՐԱՄԲԱՐՁ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՃԱՆԱՊԱՐՉԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՇԱՐԺԻՉՆԵՐ ԵՎ ՇԱՐԺԱՂՈՐԴԱԿՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՎՏՇՃՄ 04-09-010
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ ՎՏՇՃՄ կիրառվող շարժիչների և շարժահաղորդակների կառուցվածքի և կառուցվածքային առանձնահատկությունների վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	126 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՎՏՇՃՄ 04-09-003 «Կիրառական մեխանիկա» և ՎՏՇՃՄ 04-09-005 «Նյութագիտություն և վառելիքաքսանյութեր» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ ՎՏՇՃՄ կիրառվող ներքին այրման շարժիչների տեսակները և կառուցվածքային առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում կարբյուրատորային, դիզելային և վառելանյութի ներարկումով շարժիչների աշխատանքի առանձնահատկությունները, բ. ճիշտ է բացատրում ՎՏՇՃՄ կիրառվող ներքին այրման շարժիչների ընդհանուր կառուցվածքը, գ. ճիշտ է ներկայացնում շուռտվիկ շարժաթևային մեխանիզմի շարժական և անշարժ մասերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, դ. ճիշտ է ներկայացնում գազաբաշխիչ մեխանիզմի և նրա մեքենամասերի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,

	<p>ե. ճիշտ է ներկայացնում հովացման համակարգի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում յուղման համակարգի նշանակությունը և առանձին մասերի յուղման առանձնահատկությունները,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում կարբյուրատորային, դիզելային և վառելանյութի ներարկումով սնման համակարգերի նշանակությունը և կառուցվածքային առանձնահատկությունները,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում վառոցքի համակարգի և նրա հիմնական մասերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>թ. ճիշտ է ներկայացնում շարժիչի մեխանիզմների և համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ ՎՏՇԾՄ կիրառվող շարժահաղորդակների տեսակները, կառուցվածքը, աշխատանքի առանձնահատկությունները և կազմակերպել շարժահաղորդակների ազդեցատների ու մեխանիզմների տեխնիկական սպասարկման աշխատանքները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում շարժահաղորդակի նշանակությունը և տեսակները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում կցորդիչի նշանակությունը և տեսակները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում կցորդիչի յուրաքանչյուր մասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում փոխանցումների տուփի նշանակությունը, տեսակները և դրանց հիմնական մասերի նշանակությունն ու ընդհանուր կառուցվածքը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում կարդանային փոխանցման նշանակությունը, տեսակները և դրանց հիմնական մասերի նշանակությունն ու ընդհանուր կառուցվածքը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում բաշխիչ տուփի նշանակությունը և դրա հիմնական մասերից յուրաքանչյուրի նշանակությունն ու ընդհանուր կառուցվածքը,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում կամրջակի նշանակությունը և դրա հիմնական մասերից յուրաքանչյուրի նշանակությունն ու ընդհանուր կառուցվածքը,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում առջևի տանող և ղեկավարվող անիվների հաղորդակների կառուցվածքային առանձնահատկությունները,</p> <p>թ. ճիշտ է կազմակերպում շարժահաղորդակների ազդեցատների ու մեխանիզմների տեխնիկական սպասարկման աշխատանքները:</p>
Մոդուլի անվանումը «ՓՈՒՆԱԴՐՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, ԲԵՌՆՄԱՆ-ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՎՏՇԾՄ 04-09-011/01
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ բեռների տեսակների, դրանց դասակարգման սկզբունքների, բեռների փաթեթավորմանը և ամրացմանը ներկայացվող պահանջների, բեռնման-բեռնաթափման գործընթացների, դրանց

	կատարման համար նախատեսված ժամանակի նորմերի, բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող տեխնիկական հարմարանքների վերաբերյալ, ինչպես նաև վերամբարձ-տրանսպորտային մեքենաների շահագործման ընթացքում այդ գործողություններն իրականացնելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ բեռների տեսակները և դրանց դասակարգման սկզբունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բեռների տեսակները և դրանց դասակարգման ընդհանուր սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում բեռների որակական հատկանիշները, գ. ճիշտ է ներկայացնում բեռների բեռնման-բեռնաթափման ժամանակ կորստի թույլատրելի նորմերը, դ. ճիշտ է ներկայացնում տարբեր բեռների բեռնման-բեռնաթափման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցներին ներկայացվող առանձնահատուկ պահանջները:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ բեռների փաթեթավորմանը, ամրացմանը և բեռնմանը ներկայացվող պահանջները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում փոխադրական տարային և բեռների փաթեթավորմանը ներկայացվող ընդհանուր պահանջները, ինչպես նաև դրանց պիտակավորումը, բ. ճիշտ է ներկայացնում վտանգավոր բեռների բեռնման-բեռնաթափման ժամանակ փոխադրական տարային և փաթեթավորմանը ներկայացվող առանձնահատուկ պահանջները, գ. ճիշտ է ներկայացնում բեռների այն տեսակները, որոնք կարող են ներկայացվել բեռնման-բեռնաթափման առանց փաթեթավորման, ինչպես նաև պարտադիր փաթեթավորման ենթակա բեռները, դ. ճիշտ է ներկայացնում բեռները բեռնման-բեռնաթափման գործընթացում ամրացնելու սկզբունքները և ձևերը, ե. ճիշտ է ներկայացնում բեռնարկղերի տեսակները և դրանց նշանակությունը:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ բեռնման-բեռնաթափման գործընթացը և դրանում օգտագործվող տեխնիկական հարմարանքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բեռնման-բեռնաթափման գործընթացը, այդ գործընթացի ազդեցությունը վերամբարձ տրանսպորտային մեքենաների պարապուրդի և շահագործական արտադրողականության վրա, բ. ճիշտ է ներկայացնում բեռնման-բեռնաթափման հարմարանքների դասակարգումը և դրանց աշխատանքի առանձնահատկությունները՝ կախված բեռնվող-բեռնաթափվող նյութերի տեսակից և ձևից, գ. ճիշտ է ներկայացնում բեռնման-բեռնաթափման հարմարանքների կիրառման արդյունավետությունը տարբեր բեռների բեռնման-բեռնաթափման ժամանակ:

Ուսումնառության արդյունք 4	Իմանալ տարբեր տեսակի բեռների բեռնման-բեռնաթափման գործընթացի առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում տարբեր տեսակի բեռների բեռնման-բեռնաթափման գործընթացը, և դրա ժամանակ օպերատորի պարտադիր գործողությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ծանրաքաշ և ոչ զաբարիտային բեռների բեռնման-բեռնաթափման առանձնահատկությունները և կանոնները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում վտանգավոր և պայթյունավտանգ բեռների բեռնման-բեռնաթափման առանձնահատկությունները և կանոնները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում շուտ փչացող բեռների բեռնման-բեռնաթափման առանձնահատկությունները և կանոնները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում սորուն և կիտովի բեռների բեռնման-բեռնաթափման առանձնահատկությունները և կանոնները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում հեղուկ բեռների բեռնման-բեռնաթափման առանձնահատկությունները և կանոնները,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում բեռնարկղերի և հատային բեռների բեռնման-բեռնաթափման առանձնահատկությունները և կանոնները,</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում շինարարական կառուցվածքների բեռնման-բեռնաթափման և տեղակայման առանձնահատկություններն ու կանոնները:</p>
Մոդուլի անվանումը «ՎԵՐԱՄԲԱՐԶ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ»	
Մոդուլի դասիչը	ՎՏՇՃՄ 04-09-012/01
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ վերամբարձ-տրանսպորտային մեքենաների դասակարգման, նշանակության և կառուցվածքի վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել վերամբարձ-տրանսպորտային մեքենաներ ընտրելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	162 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՎՏՇՃՄ 04-09-003 «Կիրառական մեխանիկա» և ՎՏՇՃՄ 04-09-006 «Տեխնիկական հեղուկներ և հիդրոպնևմատիկա» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ վերամբարձ-տրանսպորտային մեքենաների նշանակությունը, դասակարգել և ընտրել դրանք
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում վերամբարձ մեքենաների նշանակությունը,</p> <p>բ. ճիշտ է կատարում վերամբարձ մեքենաների տեսակի ընտրությունը՝ ըստ աշխատանքի բնույթի և ծավալի,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տրանսպորտային մեքենաների նշանակությունը,</p>

	<p>դ. ճիշտ է կատարում տրանսպորտային մեքենաների ընտրությունը՝ ըստ աշխատանքի բնույթի և ծավալի,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում վերամբարձ մեքենաների դասակարգումը՝ ըստ կառուցվածքի, նշանակության, ընթացքային սարքավորման, շարժի տեսակի և կառավարման համակարգի,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում տրանսպորտային մեքենաների դասակարգումը՝ ըստ կառուցվածքի, նշանակության և շարժականության:</p>
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ վերամբարձ մեքենաների ընդհանուր կառուցվածքը և դրանց հիմնական տարրերի ու մեխանիզմների նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում վերամբարձ մեքենաների ընդհանուր կառուցվածքը և այն ցուցադրում դրանց մոդելների կամ իրական մեքենաների վրա,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում վերամբարձ մեքենաների մեխանիզմների և աշխատանքային սարքավորումների կառուցվածքը և այն ցուցադրում դրանց մոդելների կամ իրական մեքենաների վրա,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում վերամբարձ մեքենաների մեխանիզմների, հիդրավլիկական հաղորդակների և էլեկտրական սարքավորումների նշանակությունը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում վերամբարձ մեքենաների մեխանիզմների, հիդրավլիկական հաղորդակների և էլեկտրական սարքավորումների աշխատանքի սկզբունքը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում վերամբարձ մեքենաների մեխանիզմների և աշխատանքային սարքավորումների փոխազդեցությունը:</p>
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ տրանսպորտային մեքենաների ընդհանուր կառուցվածքը, տեխնիկական բնութագրերը և դրանց հիմնական տարրերի ու մեխանիզմների նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում տրանսպորտային մեքենաների ընդհանուր կառուցվածքը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում տրանսպորտային մեքենաների հիմնական տարրերի, մեխանիզմների և աշխատանքային սարքավորումների նշանակությունն ու փոխադարձ կապը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տրանսպորտային մեքենաների աշխատանքի սկզբունքները և կիրառման բնագավառները:</p>
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ բեռնիչների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, տեխնիկական բնութագրերը և դրանց հիմնական տարրերի ու մեխանիզմների նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը և կատարել բեռնիչի ընտրություն
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում բեռնիչների դասակարգումը՝ ըստ աշխատանքի օրգանի ձևի, բեռնամբարձության, ընթացամասի տեսակի, ուժային սարքավորման տեսակի,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում բեռնիչների ընդհանուր կառուցվածքը,</p>

	<p>գ. ճիշտ է ներկայացնում բեռնիչների և դրանց մեխանիզմների աշխատանքի սկզբունքները,</p> <p>դ. ճիշտ է կատարում բեռնիչների տեսակի ընտրությունը՝ ըստ աշխատանքի բնույթի և ծավալի,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում բեռնիչների մեխանիզմների, հիդրավլիկական հաղորդակների և աշխատանքային սարքավորման փոխադարձ կապը:</p>
Մոդուլի անվանումը «ՎԵՐԱՄԲԱՐԶ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ»	
Մոդուլի դասիչը	ՎՏՇՃՄ 04-09-013/01
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել վերամբարձ-տրանսպորտային մեքենաների հիմնական տեխնիկական պարամետրերի որոշման և սարքավորումների ընտրության կարողություններ:
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՎՏՇՃՄ 04-09-007 և ՎՏՇՃՄ 04-09-012/01 մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ վերամբարձ-տրանսպորտային մեքենաների տեխնիկական պարամետրերը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում վերամբարձ-տրանսպորտային մեքենաների տեխնիկական պարամետրերը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում վերամբարձ-տրանսպորտային մեքենաների գլխավոր պարամետրերը (բնութագրերը) և դրանց մեծության վրա ազդող գործոնները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում վերամբարձ-տրանսպորտային մեքենաների հիմնական տեխնիկական բնութագրերը և դրանց մեծությունների ընտրության սկզբունքները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Կատարել վերամբարձ մեքենաների մեխանիզմների հիմնական պարամետրերի ընտրություն
